



11. ԹԱՐԽՈՒՆ ԹԱԴԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Կար չկար, ժամանակով մի թագավոր կար: Էդ թագավորին իրեք աղջիկ ուներ. եթ որ աղջրկերքը մենծացան, հասակներն առան, թագավորը գնաց մենծ աղջկա օթախը, ասեց.— Զեր պսակվելու վախտն ա:

— Եր որ վախտը գա՝ կպսակվենք, ա՛յ հեր:

Գնաց միշնեկ աղջկա կուշտը, էդ աղջիկն էլ էդ պատասխանը տվեց:

Գնաց պուճուր աղջկա օթախը, նրան էլ էդ խոսքն ասեց: Պուճուր աղջիկն ասեց.— Ինձանից հլա էրկու մենծը կա, ինձ նորաթեր կհասնի:

Հերը աղջկա վրին նեղացավ, գնաց: Գնաց իրա օթախը, կանչեց վեղիրին. վեղիրն էկավ, զլուս տվեց կայնեց:

Թագավորը վեղիրն հրամայեց.— Մի թամբալ տղա գտի՛, բի՛: Վեղիրն ասեց.— Հինգ օր ժամանակ տո՛ւ, մտածեմ գտնեմ:

Վե կացավ զպա իրանց տունը գնաց. ճամփին տեհավ թագավորի մելթարխանի առաջին փեյնի վրա մի տղա նստած ա: Վեղիրը մտածեց, թե ըստուց թամբալ շեմ կարա գտնի՛ ամառ, ձմեռ փեյնի վրա վեր ընկած ա: Եղ դառավ, գնաց թագավորին ասեց:

Ասեց.— Ի՞նչ թեզ գտար: Մարդ դրկա՛, հա՛մ պուճուր աղջրկանս կանչի, հա՛մ էլ էդ տղին:

Կանչեց, էկան:

Տղեն էկավ կայնեց. թագավորը տեհավ, որ թամբալությունը էրեսիցը թափում ա, վեզրին հրամայեց, որ էրկու յասավուկ բերիլ տա. բերիլ տվեց:

Թագավորը հրամայեց, թե.— Էս տղին ու էս աղջկան վե կաւեք տարեք Օսմանցվի երկիրը, էլ իմ աշքին չէրևան:

Վե կալան տարան: Տարան իգդիր, եկեղեցու պատի տակին նստեցին, դինշացան, թագավորի աղջիկը լաց էլավ, ու յասավուկներին խնդրվեց, թե.— Մի՛ք տանի ինձ Օսմանցվի երկիրը, թողե՛ք մնամ ըստեղ, իմ մարդը թամբալ ա, չի կարա բան անի:

Շատ խնդրվեց, յասավուկի մինը խղճահարվեց, ասեց.— Թո՛ղ մնա ըստեղ, մե՛զք ա:

Էն մինը ասեց.— Թագավորը իմանա՝ մեզ քյալլա կանի, չի կարելի:

Թագավորի աղջիկը էշն խնդրվեց, թե.— Իմ հերն ի՞նչ պտի իմանա, թե ինձ տարաք Բայազիթ, թե թողիր իգդիր:

Էդ յասավուկները թողացին, եղ դառան գնացին:

Եկեղեցու պատի էն դիհը մի հալիվոր էր նստած: Եր որ էդ հալիվորը դրանց ձենը լսեց, վե կացավ էկավ դրանց կուշտը, հարցրեց.— Ո՞ւր էք էթում:

Թագավորի աղջիկն ասեց.— Իմ հերը բարկացել ա իմ վրին, տվել ա էս տղին, տանից դուս արել:

Հալիվորը ասեց.— Ինձ ո՞նչ տղա ունեմ, ո՞նչ աղջիկ, է՛կեք էթանք մեր տոմը, մեկդ՝ ինձ աղջիկ, մեկդ՝ տղա:

Վե կացան, գնացին: Գնացին տեհան մի պումով հացատուն էր, ինքն էր ու պառավը:

Աղջիկն ասեց.— Հե՛ք, ընշո՞վ էս կառավարվում:

— Օրական մի շլակ ցախ եմ բերում, ծախում ենք, կառավում ենք:

— Առավոտը տղիդ էլ տա՛ր հետդ:

— Շա՛տ լավ, կգա՝ կտանեմ:

Իրիկունը քնելու վախտը պառավը տղի տեղը քցում ա դռան ետեր, աղջկանը առնում իրա ծոցը, պառկում ա:

Առավոտը, որ քնատեղիցը վեր են կենում, պապը պարանը վեր ա ունում, էթում ա ցախի: Տղեն էլ ա վե կենում, էթում հետը: Էթում են հասնում մեշեն: Պապը ըսկսում ա ցախ-մախ հավաքիլը:

Տղեն ասում ա.— Ես ըստեղ ցախ չեմ հավաքի, ըստիան ցախը՝
մանդր ա:

Ասում ա.— Դո՛ւ գիդաս:

Տղեն էթում ա, էթում, տենում ա բաղի պատ. նիլում ա պա-
տը, տենում ա պատի տակին ընթան ցախ կա կոտորած, օխտը-
տարի կրի՝ չի հատնի:

Վեր ա գալի պատը, ցախից վեր ունում, շպրտում պատի էն-
դիհը՝ եննա էթում ա բաղի մեջը ման գալու, տենում ա մառմառ
քարից մի հավուզ, երոր մխելի մոտանում ա, տենում ա մի ջովստ
աղոմիկ ծափ էն տալի, թռնում: Մոտանում ա հավողին, տենում ա
ըտեղ մի ոսկե թաս. վեր ա ունում, դնում ծոցը: Եդ ա գառնում,
ցախը շըլակում, գալիս ա հասնում պապի կուշտը:

Տենում ա պապը նոր շըլակը կապում ա, ասում ա.— Դե՛ վե-
կալ է'թանք:

Վեր ա ունում, էթում են: Երոր հասնում են քաղաքը, Զհըդի-
մեկը գալիս ա տղի աղաքը, ասում ա.— Էդ ցախը չե՞ս ծախի:

Ասում ա.— Կծախսեմ:

Թե.— Գինն ի՞նչ ա:

— Դո՛ւ գիտաս, ինչ կտաս տո՛ս

Զհուդը ասում ա.— Տասը մանեթ տա՞մ:

Ասում ա.— Իմ վրա խի՞ ես ծիծաղում,— ասում ա,— վրես մի՞
ծիծաղա:

Ասում ա.— Հիթսուն մանեթ կտամ:

Ասում ա.— Դե՛ հանա, տո՛ս

Ասում ա.— Տանենք տուն, փողդ տա՞մ:

Տանում ա տուն, հանում ա հիթսուն մանեթը տալիս ա. տղեն
առնում ա, ուրախ-ուրախ էթում ա տուն:

Թագավորի աղջկանն ասում ա.— Աշքդ լի՞ս, մի շըլակ ցախ
տվեցի հիթսուն մանեթի:

Թագավորի աղջկին ասում ա.— Կարող ա մի կտորը հի՞թսուն
մանեթ աժենա, էգուց մի կտոր բե՛, տենանք:

Տղեն ոսկու թասը ծոցիցը հանեց, տվեց աղջկանը, ասեց.—
Էս էլ գտել եմ:

Աղջիկը շատ ուրախացավ, ասեց.— Էս թասն էլ կաժենա հա-
զար մանեթ:

Իրիկումը էկան, հաց կերան, քնացին: Էլի առավոտը վե կացան
զնացին ցախի: Տղեն եգին-եգին գնաց, ցախը շըլակեց էկավ:
էկավ հասավ պապի կուշտը, մի կտոր էդ ցախիցը տվեց պա-
պին, ասեց.— Պահա՛, տանենք տուն:
Երոր մտան քաղաքը, էլի ջհուդն էկավ, ասեց.— Հարուր մա-
նեթ տա՞մ ըսօրվա ցախիդ:

Տղեն չհավատաց, ասեց.— Իմ վրին մի՛ ծիծաղա:
Ասեց.— էրկու հարուր մանեթ տա՞մ:
Ասեց.— Իրեք հարուր մանեթ տաս, կտամ:
Ասեց.— Տանենք տուն, իրեք հարուր մանեթ տամ:
Գնաց տուն, իրեք հարուր մանեթը առավ, էկավ իրանց տուն:
Թագավորի աղջկանն ասեց.— Ըսօրվա մի շըլակ ցախը տվեցի
իրեք հարուր մանեթի:

Երոր թագավորի աղջիկը տեհավ պապի բերած մի կտոր ցա-
խը, ասեց.— Էս մի կտորը կաժենա հազար մանեթ:
Սրանից եղը տղեն հա՛ բերեց, հա՛ էվելի գնով ծախեց:
Երոր հարստացան, տղեն ասեց պապին:— Պա՛պի, մի ձեռք
տներ պտի շինեմ:

Ասեց.— Դո՛ւ գիտաս, ո՛րդի:
Սկսեց շինիլը: Երոր շինեց պրծավ, անումը դրին՝ Իգդիրա ա-
մարաթի տերը:

Սրանք մնան ըստի, մենք խարարը տանք էն ջուստ աղունը-
կիցը:

Ջուստ աղունիկը որ ծափ տվին գնացին, Ըսեհան թագավորի
աղջիկն ին:

Մենծ աղջիկը գնաց հոր կուշտը, գանգատ արեց, ասեց.— Իգ-
դիրա ամարաթի տերը էկավ մտավ իմ բախչեն, ցախը տարավ,
քյասիր էր, հլա ջհա՛ննամ, էկավ հավըզի կուշտը, մենք լեղանում
ինք, մենք թուանք, մեր թասը վե կալավ. բա՛ էդ օրենք ա, ա՛յ հեր,
որ գա հա՛մ մեր ցախը տանի, հա՛մ թասը վեր ունի, հա՛մ էլ մեր
տկլոր ջանը տենա, բա՛ ամոթ շի՛:

Թագավորը բարկացավ, կանչեց իրա թուման դմին, ասեց.—
Սհաթի տասնէրկըսին Իգդիրա ամարաթի տերը քեզանից կուզեմ:
Թուման դմը վե կացավ գնաց դպա Իգդիր. էն վախտը գնաց,

որ չորսով նստած հաց ին ուտում, վեր էկավ բալկոնիցը, մտավ՝ հաշտը, հաշտիցը ձեռք քցեց տղին ու քցեց շըլակը, առավ ու թռավ։

Դրանք՝ «Վայ», վայ, տարայվ», լաց, արտասունք՝ Թոման դևը տարավ թագավորի պալատի տակին վե դրեց, ասեց.— Գնա՛, թագավորը կանչում աւ։

Գնաց թագավորի կուշտը, զլուս տվեց, ձեռները կապեց, կայնեց։

Թագավորն ասեց.— Իգդիրա ամարաթի տերը դո՞ւ ես։

Ասեց.— Ե՛ս եմ։

Ասեց.— Կանչե՛ք աղջկանս, գա՞։

Կանչեցին, աղջիկն էկավ։

Հերն ասեց.— Է՞ս ա տղեն։

Աղջիկն ասեց.— Էղ ա։

Զեն տվեց.— Զանլա՛թ։

Զանլաթները թրերը քաշեցին մտան նեքսեւ, աղջիկն էկավ առաջ, խնդրվեց, ասեց.— Թագավորն ապրած կենա, երոր դրան սըպանում ես, մենակ դրան չես սըպանում, Թարխուն թագավորի աղջկանն էլ հետոն ես սըպանում, Թարխուն թագավորը բարկացել ա իրա աղջկա վրին, տվել ա էս տղին ու քաղաքիցը հեռացրե։

Թագավորը ասում աւ.— Մեղքը քու շլինքը, դո՞ւ էկար գանգատ արիր. որ ըտենց ա, իմ ախշիկն էլ ավեցի քեզ, ա՞յ տղա։ Դու գնա՛, իրկունը քառասուն զարավաշով ինքը կգա, գշերը կմնա կշտիդ, առավոտը զարավաշները եղ կգան։

Տղեն դուս էկավ, մոլորվեց. տեհավ որ շի կարա էթա, մտավ նեքսեւ, թագավորին խնդրվեց, ասեց.— Յա զլուսս տո՞ւ, յա ո՞նց որ բերել ես, ընենց էլ ճամփու դի։

Թագավորը կանչեց Թոման դևին, ասեց.— Վե կալ տա՛ր էս տղին իրա տեղը։

Վե կալավ, տարավ։ Տղեն որ բանձրացավ վիրեն, տեհան՝ շա՛տ ուրախացան։ Մնաց մինչև արևմըտոց, մեկ էլ տեհան քառասուն զարավաշով Ըոեհան թագավորի աղջիկը վեր էկավ բալկոնը թրփ-թըփալով։

Ըոեհան թագավորի աղջիկը մտավ նեքսեւ, բարեւ տվեց ու կաննեց, զարավաշները էկան մին-մին զլուս տվեցին ու կաննեցին։ էկավ հացի վախտը, նստեցին հաց կերան։ Վե կացավ պառավը, տեղ շինեց։ Քառասուն զարավաշի հմար մի ձեռք տեղ

քցեց, Ըուեհան թաքավորի ու Թարխուն թաքավորի աղջրկեքանցն առավ իրա ծոցը, բնեց: Տղի տեղն էլ դան քամակին քցեց: Երոր վիսը բացվեց, զարավաշները վե կացան գնացին, Ըուեհան թաքավորի աղջիկը մնաց ըտեղ:

Կամարը տանք Թարխուն թագավորիցը:

Թարխուն թագավորը կանչեց վեղոին, թե.— Թաղարեք տե՛ս, է թանք ման գալու երկիրը:

Վե կացան գնացին: Շատ գնացին, քիչ գնացին, էկան հասան իդդիր: Աղջիկը իմացավ որ հերը գալիս ա՝ գնաց համամ, իրա շորերը փոխեց, թագալորական շորերը հագավ, զուգվեց, իրանց ամարաթի դռանը կաննեց: Հերն էկավ, ըտոնց դռան առաջովն անցկացավ: Անցկենալու վախտը տեհավ ըտեղ մի կնիկ կաննած ա, անզալաթ սիրուն էր. երոր թագավորը տեհավ՝ ուշը գնաց: Երոր ջուր բերին տվին էրեսովը, աշքերը բաց արեց, տեհավ էլի կայնած ա գուանը, էլի ուշը գնաց: Թաղադան որ ուշն էկավ վրեն, վե կացավ ու գնաց: Դնաց հասավ իրա քաղաքը:

Կանչեց իրա վեղոին, ասեց.— Էն իմ տեհած կնիկը ո՞ր լրերես ինձ հմար, ես կմեռնեմ:

Վեղիրն ասեց.— Ո՞նց բերեմ, նրա մարդը, հալբա՛թ, հարուստ մարդ ա, չի՛ տա. լավն էն ա՝ կանչե՛նք, մի ընենց տեղ դըրկենք, որ էթա, չգա:

Թագավորն ասեց.— Մտածա՛, գտի՛:

Մարդ զրկեցին; էդ տղին կանչեցին: Տղեն էկավ, օխտը հետ գլուխ տվեց, բարե բռնեց, կաննեց:

Թագավորն ասեց.— Տղա՛, մենք փուշկ ենք զցե, ընկել ա քու վրա, դու պտի էթաս Մարշան թաքավորի քաղաքը, Անմահական ջուր ու խնձոր բերես:

Տղեն ասեց.— Ես ճամփեն շե՛մ գիտա, ո՞նց պտի էթամ:

Ասեց.— Անպատճառ պտի էթաս, մի հնար գտի, գնա՛, թե չէ-թաս՝ զլովսդ կկտրենք:

Տղեն երկար ժամանակ մտածեց, ասեց.— Լա՛վ, կէ՛թամ:

Գլուխ տվեց, գնաց իրանց տուն: Երոր հասավ իրանց տուն, Ըուեհան թագավորի աղջիկը դուս էկավ, տղին հարցրեց.— Ընդի՛ հմար էր թագավորը քեզ կանչե:

Ասեց.— Կանշել էր, որ դրկի Մարշան թագավորիցը Անմահական ջուր բերեմ ու խնձոր:

Աղջիկն ասեց.— Էրնա՛կ քեզ, էրնա՛կ քու աշքի լսին, կէթասընտեղարենք ման կդաս, կտենաս՝ ինչքա՞ն լավ տեղ աւ:

Ասեց.— Ես ճամփեն չեմ գիտա, ո՞նց էթամ:

Ասեց.— Բա իմ քիրն ի՞նչ ա, իմ քիրը վե կունի կտանի հերանցս տոմը, թոման դուվը կըդրկի, կէթաս, էրնա՛կ քեզ, էրնա՛կ քու աշքի լսին:

Մի հինգ օրից եղը տղեն գնաց Ըոեհան թագավորի աղջկաբախչեն: Գնաց հավըզի վրա կաննեց, ձեն տվեց.— Քե՛նի բա՛զի, քե՛նի բա՛զի:— Քենին դուս էկավ! — Դու՞ւ էս էկե, փեսա, արի՛ նեքսև:

Ասեց.— Վուազ եմ, չե՛մ կարա: Ինձ պտի տանես հերանցը տունը:

Քենին առավ փեսին թևերի վրա ու թուավ, տարավ հերանցը տունը: Տղեն գնաց թագավորի կուշտը, բարե տվեց, բարեն առավ:

Թագավորը շատ ուրախացավ, վե կացավ թշերը պաշեց, ասեց.— Ո՞նց ա, յա՛րաբ, մեր ախշիկը:

Ասեց.— Շա՛տ լավ ա, շա՛տ-շա՛տ բարեռում ա:

Երոր թագավորի կնիկը իմացավ, վե կացավ վաղելով էկավ, ընկավ փեսի ճտովը:— Փեսա զա՛ն, յա՛րաբ իմ ախշիկը ո՞նց ա:

— Շա՛տ լավ ա, շա՛տ էլ բարե ա անում:

Ասեց.— Խե՞ր ըլնի քու գալը:

Ասեց.— Փա՛ռք ասսու, խեր ա,— ասեց,— ես պտի էթամ՝ Մարշան թագավորի աղջկա բաղիցը Անմահական ջուր ու խնձոր բերեմ:

Ասեց.— Էրնա՛կ քեզ, էրնա՛կ քու աշքի լսին, կէթաս ընտեղարենք ման կդաս, կտենաս:

Հստեղ հինգ օր ղոնազ էլավ, զանքաշը շթողաց էթա: Երոր հինգ օրը թամմեց, վապեց, ասեց.— Ճամփեն չեմ գիտա, ո՞նց էթամ:

Թագավորը հրամայեց Թոման դկին:— Արի վե՛կալ ու գնա՛:

Թոման դեք վեկալավ ու գնաց: Գնաց հասավ Մարշան թագավորի աղջկա ամարաթի տակը, ասեց.— Վե կաց գնա՛, ես ըստեղ բանդ կըլնեմ, ի՞նչ պըտի վեր ունես՝ գնա վեկալ, արի՛ էթանք:

Տղեն մտավ բախսի մեջը, ման էկավ, Անմահական աղբուրը գտավ, շրիցը վե կալավ, ման էկավ՝ Անմահական խնձորն էլ գտավ, քաղեց, էկավ մտավ թագավորի աղջկա օթախը, տեհավ հացը հազիր դրած ա, նստեց, կերավ: Տեհավ՝ ըտեղ մի պապիրոս էլ կար, կեսը բաշած էր, կեսը մնում էր, վե կալավ քաշեց: Ենիսա թագավորի աղջկա օթախի դուռը բաց արեց, մտավ ներսն, տեհավ որ թագավորի աղջիկը քնած ա. ոնների տակը դրած շամագանները դրեց զիխավիրեւը, զիխավիրեւի շամագանները դրեց ոնների տակը, եղ դառավ՝ իրա մատանիքը դրեց աղջկա մատը, աղջկա մատանիքը դրեց իրա մատը, կոացավ էրկու թուշն էլ պաշեց, դուս էկավ՝ էկավ, Խնձորն ու Ձուրը վե կալավ, նիլավ Թոման դկին. Թոման դկն էր՝ թռավ, գնաց: Տասն օրվա ճամփեն համարյա մի սհաթումը տարավ: Տարավ Ռոեհան թագավորի ամարթի տակին վե դրեց: Տղեն բանձրացավ վիրեւ, թագավորն ու թագուհին էկան ընկան շըլընքովը:

— Գալդ բա՛րի ըլնի, — ասեցին, — գնացիր, ման էկար, էկար:

Հինգ օր էլ պահեցին ըտեղ, լավ ուտացրեցին, խմացրին, հինգ օրից եղը թողին էթաւ:

— Շա՛տ բարև կտանես մեր աղջկանը, — ասեցին:

Էլի նստեց Թոման դկի վրա, Թոման դկը թռավ գնաց, տարավ իրա տանը վե դրեց:

Էգսի օրը տղեն վե կացավ, նիլավ ձին, գնաց Թարխուն թագավորի ամարաթը, հանեց Անմահական ջուրն ու խնձորը տվեց թագավորին:

Թագավորը տիրեց, մի խոսք էլ ա շասեց: Տղեն եղ դառավ, գնաց իրանց տուն:

Թագավորը շատ թունդ բարկացավ վեղրի վրա, ասեց. — Դու ասում իր՝ կէթա, էլ չի գա, բա խի՝ էկավ:

Վեղիրն ասեց. — Ընտեղ քոմմա սեհրբազ են, թե ո՞նց ա եղ դառե՝ չեմ իմանում:

Խարարը տանք Մարշան թագավորի աղջկանիցը:

Թագավորի աղջիկը երոր զարթնում ա, բիրդան տենում ա շամագանները փոխված ա. էթում ա լվացվելու, տենում ա՝ մատի մատանիքը փոխված է, իրա մատանիքը չի: էթում ա հայլուն թամաշ անում, տենում ա՝ էրկու էրեսին էլ խալ կա, բաց ա անում

էն մեկել օթախի դուռը, տենում ա՝ պապիրոսն էլ են քաշե: Ինքը շատ իմաստուն էր, ձեռաց իմացավ, որ Իգդիրա ամարաթի տերն էր արել:

Վե կացավ բարկացած գնաց հոր մոտն, ասեց.— Ա՛յ հեր, ո՛չ դու ըլնես, ո՛չ քու թագավորությունը:

Թագավորն ասեց.— Ա՛ղի, հո՛ դու չես գծվել:

Ասեց.— Ի՞նչ անեմ, Իգդիրա ամարաթի տերը էկել ա մտել իմ բախչեն, հա՛մ ջուր, հա՛մ Խնձոր ա տարե, դե էն հաւ դեղապետ ա, տանում էր՝ տաներ, բա բանձրանա իմ օթախի կողքը. հացը ուտի, պապիրոսը քաշի՝ էդ էլ բաշխենք, սոված ա էլել՝ կերել ա, բա ո՞նց ա սիրտ արե, մտել ա իմ օթախը, իմ քնած վախտը շամադաններս փոխել, մատանիքս փոխել և կոացել իմ էրեսիցն էրկու պաշ առել. մի մտիկ արա՛, տե՛ս էրեսիս ո՞նց խալ ա ընկե:

Հոտեղ թագավորը շատ բարկացավ, ասեց.— Կանչե՛ք իմ թըռման դմին:

Կանչեցին, էկավ:

Թագավորը հրամայեց, որ էթա Իգդիրա ամարաթի տիրոններ վեր ունի, բերի:

Թուման դեր թռավ, վեր էկավ Իգդիրա ամարաթի բալկոնը, ուսուզով մտավ հաշտը, տեհավ, որ նստած հաց են ուտում, տղիթեցը բռնեց ու քցեց շըլակը:

Հաց էլան. ռվա՛յ, վա՛յ, տարա՞ն, հա տարա՞ն, ո՞նց պըտի ըլնիո:

Հուեհան թագավորի աղջիկը ասեց.— Բա՛ն չկա, տարան, էլի կդա, երկյուղ մի՛ք անի:

Թուման դեր տղին տարավ դրեց Մարզան թագավորի բալկոնը, ասեց.— Դե՛ վեր արի գնա՛, թագավորը կանչում ա:

Տղեն մտավ նեքսե, օխտը հետ գլուխ տվեց, ձեռները դրեց դռշին, կաննեց:

Թագավորը հարցրեց, ասեց.— Իգդիրա ամարաթի տերը դու՞ւ ես:

Ասեց.— Ե՛ս եմ:

Ասեց.— Զեն տվե՛ք իմ աղջկանը, գա՛:

Կանչեցին, էկավ:

Թագավորը ասեց.— Է՛ս ա:

Ասեց.— է՛ս ա:

Բարկացած ձեն տվեց.— Զանլա՞թ:

Զանլաթները թրերը քաշեցին, մտան նեքսև:

Աղջիկը որ տղին տեհավ՝ սիրուն տղամա՞րդ, սիրտը կպավ, ասեց.— Ա՛յ հեր, մեղք ա, զլուխը մի կտրի, իրեքին էս սըպանում, ոչ թե մնին:

Թագավորն ասեց.— Ո՞նց:

Ասեց.— Թարխուն թագավորը բարկացել ա, աղջիկը տվել ա սրան, Ըստհան թագավորն էլ ա բարկացի՝ աղջիկը տվել սրան, Հմի երոր դրան սըպանես, էն էրկուսն էլ հետը կսըպանվեն:

— Ախար չէ՞ որ զու էկար գանգատվեցիր:

Աղջիկն ասեց.— Տղա ա, սխալվել ա, բա՛ն չկա:

— Որ ըտե՛նց ա,— ասեց թագավորը բարկացած,— ես էլ քեզ կտամ սրան: Տղա՛, թող զնա, իրիկունն իմ աղջիկը իրա քառասուն դարավաշովը կգա:

Տղեն դուս էկավ, շորս յանը թամաշ արեց, մոլորվեց. Եղ դառավ, թագավորին խնդրվեց, ասեց.— Յա զլուխս տո՛ւ, յա ինձ թուման դմովը ճամփու քցա՛:

Թագավորը հրամայեց թուման դմին, վե կալավ, տարավ իրա տունը, վե զրեց:

Տղեն որ մտավ նեքսև, քոմմեքը վե կացան կաննեցին, ուրախացան ու բարովեցին:

Իրիկունը, մին էլ տեհան, թը՛փ, թը՛փ, թը՛փ, էկան վեր էկան քառասունըմեկ աղունիկ. դառան աղջիկ, մտան նեքսև: Թագավորի աղջիկը զլուխ տվեց քոմմեին, կաննեց. զարավաշները էկան միմին զլուխ տվին, կաննեցին: Հացի թադարեք տեհան, նստեցին հաց կերան: Պառավը վե կացավ, տղի տեղը դռան քամակը քցեց, քառասուն դարավաշին մի ջոկ օթախ տվեց, իրեք աղջկանն առավ իրա ծոցը, քննեցին:

Առավոտը դարավաշները գնացին, աղջիկը մնաց ըտեղ:

Եղ դառնանք, խարարը տանք ո՞ւմից՝ Թարխուն թագավորից:

Թարխուն թագավորը հրամայեց վեզրին.— Թադարեք տե՛ս, է՛թանք ման գալու:

Էկան ման գալու, հասան իգդիր: Աղջիկը երոր իմացավ, որ իրա հերը գալիս ա, գնաց համամ, հագավ, զարդարվեց, էկավ

իրանց դուան միջին կաննեց: Երոր թագավորը էկավ անց կենալու, տեհավ հրես մի կնիկ ըտեղ կաննած ա, սիրուն, սիպտաշ՝ կ, փրմ-փուխ, արեգակին ասում էր՝ դու մի՛ դուս գա, ե՛ս դուս եմ զալի, բո՛լ ա:

Թագավորի ուշը գնաց. վեղիրը ձեն տվեց.— Զո՞ւր, Հա զո՞ւր! Զուր բերեցին, տվին էրեսովը. ուշն էկավ վրին: Վե կացավ, գնաց: Երոր հասավ իրա քաղաքը, թագավորը վեղրին ասեց.— Անպատճառ պտի բերես էն կնկանը, որ շբերես՝ ես կմեռնեմ:

Վեղիրն ասեց.— Ո՞նց բերենք, խի՞ պըտի տա, մի պատճառ պտի դունենք, բալքի մարդին վնասենք, նո՞ր կնկանը բերենք:

Ասեց.— Ի՞նչ ուզում էս արա, կնկանը պտի բերես:

Վեղիրն ասեց.— Կանչե՞նք տղին, ասենք՝ մեր սաղ դոշընին ու քաղաքի մարդկանց հաց տա, երոր մեկը գանգատավոր կըլնի՛ զլուխը կտանք:

Թագավորը մարդ դրկեց՝ կանչեց, ասեց.— Լսել եմ, շա՛տ հարուստ ես, իմ սաղ դոշընին ու քաղաքի մարդկանցը պտի մի օր հաց տաս, թե որ շտվիր՝ զլուխը կտա՞մ:

Տղեն ասեց.— Շա՛տ լավ, մի հինգ օր ժամանակ տվեք, էթայ տուն, գամ՝ տա՞մ:

Ժամանակ տվին, գնաց տուն: Ըուհան թագավորի աղջիկը գուս էկավ առաջը, ասեց.— Ցա՛րաք ի՞նչ խարար ա:

Ասեց.— Թագավորը ուզում ա, որ դոշընին ու քաղաքին մի օլուս միջին հաց տամ. թե որ տալու շըլնեմ՝ զլուխս կտա: Հմի զողը զանս առել ա, թե ո՞նց պտի հազրեմ:

Ըուհան թագավորի աղջիկն ասեց.— Դրա հմար խի՞ ես երկյուս անում, շատ հեշտ բան ա:

Տղեն ասեց.— Ո՞նց հեշտ բան ա, ըտքան պատրաստության տենալը հե՞շտ ա:

Սղջիկն ասեց.— Քանի՞ օր ժամանակ էս ուզեմ:

Ասեց.— Հինգ օր:

— Դե՛, — ասեց,— վե կաց գնա քվորս կուշտը. երոր կհասնես հավըզի վրա, ձեն տու, քիրս դուս կգա, նրան ասա, թե. «Քիրդ պոմուր էրկանքներն ուզում ա»:

Տղեն վե կացավ գնաց հավըզի դրաղը, ձեն տվեց.— Քե՛նի բա՛չի, քե՛նի բա՛չի:

Քենին դուս էկավ, ասեց.— Բարո՛վ ես էկե, փեսա, արի՛ նեք-
սե, արի՛ նեքսե:

Ասեց.— Զէ՛, վռազ եմ, պտի էթամ: Քիրդ,— ասեց,— պումուր-
էրկանքներն ուզում ա:

Մտավ նեքսե ու բերեց.— Ա՛ռ,— ասեց,— փեսա ջա՛ն:
Վե կալավ, էկավ տուն:

Երոր էկավ տուն, Թարխուն թագավորի աղջիկը, Ըոեհան թա-
գավորի աղջիկը, Մարշան թագավորի աղջիկը պատրաստություն-
տեհան, մի շադիր վե կալան գնացին թագավորի քաղաքի դրաղը,
մի շայիր-շիման տեղ վեր էկան:

Ըոեհան թագավորի աղջիկն ասեց.— Դե՛ գնա, թագավորին-
իմաց տո՛ւ, թող դոշունն ու իրա ժողովուրդը վեր ունի գա հաց-
ուտի:

Տղեն վե կացավ գնաց, կանչեց: Թագավորը հրամայեց՝ ղո-
շունն ու բիրաղի քաղաքացիք, մենծ ու պումուր վե կացան, գնա-
ցին:

Տղեն որ եղ դառավ, Ըոեհան թագավորի աղջիկն ասեց.— Էւ-
էրկանքները մի պըտըտի՛:

Տղեն պըտըտեց, վրզզալեն ամեն տեսակ եմակ միջիցը ղու-
էկավ: Դոշունն էլ կերավ, ժողովուրդն էլ կերավ, հացն ու եմակը-
էլ եղ մնաց կիտուկ:

Թագավորն ու վեղիրն ասեցին.— Էթանք տենանք, հո՛ գան-
գատավոր չկա, տղի գլուխը կտրենք:

Էկան տեհան, որ ինչքան որ կերել են, էնքամ էլ կիտած ա-

Տղեն գնաց առաջ, թագավորին գլուխ տվեց կաննեց, ասեց.—
Թագավոր, էսքան եմակը պատրաստել եմ, ուտող չկա, բա ո՞ւր-
ա ուտողը:

Թագավորն ասեց.— Բիրաղի դրկել եմ, էկել ա:

Էլի նիաթը կախեց, վեզրի հետ թողաց գնաց:

Ըտոնք էլ շադիրը քանդեցին, գնացին դպա իրանց տուն:

Մի քանի օրից եդը էլ եղ թագավորը վեզրին վե կալավ էկավ
դպա իդիր: Էլի աղջիկը գնաց համամ, զուգվեց, զարդարվեց, էլի
իրանց դռանը կաննեց:

Թագավորը երոր էկավ անցկենալու, աշքը առավ, էլի ուշը-
գնաց, նվազեց:

— Հո՞ւր հա, ջո՞ւր, — աղջիկը ջուրը վե կալավ ու գնաց:

Գնաց ջուրը տվեց հոր էրեսովիր: Հերը բիրդան աշքերը բաց
արեց, տեհավ, ընը՝, իրա տեհած աղջիկն ա ջուրը էրեսին տվել:
— Վա՛յ, — ասեց, — զլիսիդ զո՞ւրբան, իմ ուշ-միտքս գշեր-
ցերեկ դպա քեզ ա:

Ասեց. — Աշքերդ քոռ հո՛ չի, բա չե՞ս ճանանշում:

Ասեց. — Ո՞վ էս, չե՞մ ճանանշում:

Ասեց. — Ախար աղջիկդ եմ, Հնազանդն եմ, որ տվեցիր թամ-
քալ տղին: Հմի էս ամարաթը էն թամբալ տղինն ա: Ա՛րի էթանք
տում:

Թագավորը փաթըթվում ա աղջկանը, լաց ա ըլնում:

Աղջիկը վեր ա ունում հորը, տանում ա տուն: Թագավորը թա-
մաշ ա անում դրա օթախներին, տենում ա իրա օթախներիցը տա-
սը անդամ լավ ա:

Հոեհան թագավորի աղջիկը գալիս ա՝ թագավորին բարեւում
ա, Մարշան թագավորի աղջիկն էլ ա գալի, տղեն էլ ա գալի բա-
րեւում: Հալիվորն ու իրա կնիկն էլ են գալի բարեւում:

Երոր ըտե նստում են, նո՞ր թագավորը հարցնում ա. — Պսակ-
վա՞ծ ես, տղա ունե՞ա:

Ասում ա. — Հլա պսակված չենք, ազապ ենք: Էս՝ էրկուան էլ
ճն իմ մարդինը, նրանք էլ են աղապի:

Թագավորն ասեց. — Հազիր ես ըստեղ եմ, պսակեմ քոմմքիդ,
նո՞ր էթամ:

Գնացին հարսանըքի թաղարեք տեհան, օխտը օր, օխտը
զշեր, օխտը ձեռք դափ ու զուռնեն ածեցին, կերա՛ն, խմեցի՛ն,
քե՛ֆ արին, սֆթա թարսում թագավորի աղջկա հետ պսակեցին,
էզսի օրը Հոեհան թագավորի աղջկա հետ, երրորդ օրը՝ Մարշան
թագավորի աղջկա հետ:

Ընտրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ
հասնի իրա մուրազին:

Ասսանից իրեք հատ խնձոր ընկավ, մինը՝ ասողին, մինը՝
չսողին, մինն էլ անկաշ դնողին:



